Հայոց ցեղասպանության հիշատակման օր - ապրիլի 24, 2021

Առաջարկվում է 2021 թ. ապրիլի 24-ը Սան Ֆրանցիսկո քաղաք-շրջանում «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» նշանակող բանաձևը, որով կոչ ենք անում Նախագահ Ջոզեֆ Բայդենին պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը և Սան Ֆրանցիսկոյի կրթական խորհուրդին՝ վերահաստատել Հայոց ցեղասպանության մասին պատմական փաստերի մասին ուսուցումը հանրակրթական հաստատություններում ներառելու իրենց պատրաստակամությունը:

Հայ ժողովուրդը, ապրելով իր պատմական հայրենիքում շուրջ 4000 տարի, քսաներորդ դարասկզբին (ներառյալ 1894-1896 թթ. ընկած ժամանակահատվածում և 1909 թ-ին) և դրանից հետո շարունակաբար ենթարկվել է համատարած ջարդերի, հողի և ունեցվածքի յուրացումների, մշակութային հաստատությունների և հուշարձանների ավերածությունների Օսմանյան կայսրության թուրքական կառավարության կողմից:

Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ անասելի ոճրագործություններն իրենց գագաթնակետին հասան 1915 թ-ին, ինչն այսօր պատմաբանների կողմից հայտնի է, որպես քսաներորդ դարի առաջին ցեղասպանություն:

1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայի իշխանությունները պլանավորել և իրականացրել են հայ ժողովրդի նկատմամբ համատարած վայրագություններ, որոնք հանգեցրել են 1.5 միլիոն հայ կանանց, տղամարդկանց և երեխաների սպանությանը, ինչպես նաև նրանց ողջ անձնական և համայնքային ունեցվածքների բռնազավթմանը և ոչնչացմանը:

Ի պատասխան վերը նշված վայրագությունների ստեղծվեց «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպությունը, որը ԱՄՆ-ի կառավարության կողմից հատկացված միջազգային օգնության ամենավաղ ծրագրերից մեկն էր, աջակցելու ցեղասպանությունը վերապրածներին, այդ թվում հայերին, ասորիներին և հույներին: Հաջողությամբ հավաքելով շուրջ երկու միլիարդ դոլար (ներկայիս արժույթով)՝ հաջողվեց փրկել մոտ մեկ միլիոն փախստականների՝ այդ թվում ցեղասպանության արդյունքում որբացած 132.000 երեխաների կյանքեր:

Թուրքիան այսօր ժխտում է մարդկության դեմ վավերագրված և լայնորեն ճանաչում ստացած հանցագործությունները և հրաժարվում է հատուցում տրամադրելուց, միևնույն ժամանակ շարունակելով հայերի գոյության հետքերի բնաջնջումը, մշակութային ժառանգության և հուշարձանների ոչնչացումը իրենց պատմական հայրենիքից:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցությամբ իրականացված Ադրբեջանի 44-օրյա կործանարար հարձակումը Արցախի (Լեռնային Ղարաբաղի) էթնիկ հայկական շրջանի վրա Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության անմիջական արդյունքն էր: 2020 թ. հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Սան Ֆրանցիսկո քաղաքում տեղի են ունեցել մի շարք վտանգավոր իրադարձություններ, որոնք

միտված են եղել ընդդեմ տեղի հայ բնակչությանը: Դրանց շարքում է Հայ մշակութային կենտրոնի հրկիզումը, որը հանգեցրել է շինության չորս հարկերից երկուսի ավերածության: Հարկ է նաև նշել, Գռուզեան-Զաքարեան-Վասպուրական Ազգային վարժարանի և իրեն կից Հայկական կենտրոնի հանդեպ հակահայկական վալնդալիզմի դրսևորումների մասին:

Սան Ֆրանցիսկոյում ատելության նմանատիպ դրսևորումները պետք է դատապարտվեն և պատժվեն օրենքի ողջ խստությամբ: Անհրաժեշտ է նաև աջակցել ամերիկահայ համայնքին ատելության հանցագործությունների արդյունքում առաջացած հետևանքներից վերականգնվելու համար:

Հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանությունը վերապրածներին, մեր դպրոցներում ուսուցանելով Հայոց ցեղասպանության մասին փաստերը և հետևողականորեն դատապարտելով հալածանքներն ու վայրագություններն ընդդեմ հայ ժողովրդի, ինչպես նաև Օսմանյան կայսրության ասորի և հույն բնակչության՝ մենք պաշտպանվում ենք ապագայում ցեղասպանության կրկնությունից:

Կալիֆոռնիա նահանգը ԱՄՆ-ում դարձել է ամենամեծ հայկական բնակչություն ունեցող համայնքը: Համայնքի ներկայացուցիչները, հպարտորեն կրելով Միացյալ Նահանգների քաղաքացու իրենց կոչումը, անմիջականորեն նպաստել են տեղի գիտության, բժշկության, մշակույթի, ձեռներեցության և կառավարման ոլորտների զարգացմանը:

Քանի-որ Սան Ֆրանցիսկո քաղաքի ամերիկահայ համայնքի մեծ մասը ցեղասպանությունը վերապրած և փրկված անձանց հետնորդներն են, Սան Ֆրանցիսկոն հպարտ է միանալու հայ-ամերիկյան համայնքին՝ հիշատակելու Հայոց ցեղասպանության տարելիցը և տեղեկացնելու աշխարհին հայ ժողովրդի բազմաթիվ կորուստների, նրանց հանդեպ իրականացված մարդու իրավունքների ոտնահարման և ցեղասպանության հանցագործության մասին:

Կալիֆոռնիա նահանգի օրենսդիր մարմնի կրթական հարցերով ենթահանձնաժողովը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերը ուսումնական ծրագրերում ներառելու մասին բանաձևը:

2019 թ. հոկտեմբերի 29-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 296 բանաձևը:

2019 թ. դեկտեմբերի 12-ին ԱՄՆ Սենատը միաձայն քվեարկեց 150-րդ բանաձևի օգտին, որը պաշտոնապես ճանաչել և հաստատել էր Հայոց ցեղասպանության պատմական փաստերը ԱՄՆ կառավարության կողմից: Այսպիսով ԱՄՆ Սենատը խրախուսում է ԱՄՆ-ում շարունակական միջոցառումների իրականացումը մարդկության դեմ կատարված այս միջազգային հանցագործությունը հիշատակելու համար: Բանաձևը նաև աջակցում է ԱՄՆ հանրակրթական հաստատություններում Հայոց ցեղասպանության առարկայի դասավանդմանը՝ մերօրյա նմանօրինակ հանցագործությունները կանխարգելելու նպատակով:

Սան Ֆրանցիսկոյի վերահսկիչ խորհուրդը այսուհետ նշում է 2021 թ. ապրիլի 24-ը որպես «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» Սան Ֆրանցիսկո քաղաք-շրջանում:

Վերահսկիչ խորհուրդը կոչ է անում Սան Ֆրանցիսկոյի կրթական խորհրդին վերահաստատել իրենց պատրաստակամությունը Սան Ֆրանցիսկոյի միավորված դպրոցական շրջանի դպրոցներում Հայոց ցեղասպանության պատմական փաստերը ուսուցանելուն, ինչպես նշված է Կալիֆոռնիայի կրթության վարչության պատմա-հասարակագիտական բովանդակության դրույթում:

Վերահսկիչ խորհուրդը նախագահ Ջոզեֆ Բայդենին հորդորում է պահպանել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու իր նախընտրական խոստումը:

Վերահսկիչ խորհուրդը խորհրդի գործավարին ուղղորդում է սույն բանաձևի պատճենները փոխանցել Սան Ֆրանցիսկոյի կրթական խորհրդին և քաղաքի լոբբիստին վերջնական ընդունումից հետո: